ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/74

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝

Վ. Վահանյանի (լիազորագիր, տրված՝ 13.06.2019թ.)

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 17.10.2019թ. ներկայացված (18.10.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/74 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն 17.10.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից 10.10.2019թ.

հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգ: Գնման առարկան է հանդիսանում բժշկական սարքերի ձեռքբերումը:

Հրավերի երկրորդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը կազմված է այնպես, որ դրան բավարարում է միայն մեկ արտադրող:

Ընկերության կողմից 11.10.2019թ. ուղարկվել է պարզաբանման հարցում, որին Պատվիրատուն պատասխանել է 4 օր անց, մինչդեռ պարտավոր էր պատասխանել երկու օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն իր պարզաբանման մեջ նշել է, որ «մասնակիցների կողմից կարող են առաջարկվել ոչ միայն Ձեր կողմից նշած Philips ընկերության Digitrak XT մոդելի ապրանքատեսակը, այլ նաև այլ արտադրողի (ների) համարժեք ապրանքատեսակներ», մինչդեռ Ընկերության կողմից կատարված մանրակրկիտ վերլուծությունների, այլ արտադրողների տեխնիկական բնութագրերի համեմատությունների արդյունքում պարզվել է, որ Philips ընկերության Digitrak XT մոդելն է համապատասխանում Պատվիրատուի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Տվյալ դեպքում Պատվիրատուն չի տրամադրել պարզաբանումը օրենքով նախատեսված ժամկետում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Փաստացի Պատվիրատուի կողմից կազմված է այնպիսի բնութագիր, որին համապատասխանում է միայն Philips ընկերության Digitrak XT մոդելի ապրանքատեսակը, իսկ այլ արտադրողների կողմից վաճառվող համանման ապրանքների բնութագրերը այս

կամ այն պարամետրով տարբերվում են Պատվիրատուի պահանջած մոդելի բնութագրերից:

Ի հավելում վերը նշվածի, որպես անուղղակի փաստարկ, Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն նույն բժշկական սարքի համար նույն պարամետրերով մրցույթ է հայտարարել նաև շուրջ մեկ ամիս առաջ, սեպտեմբերի 11-ին՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով, որին մասնակցել է ընդամենը մեկ ընկերություն և առաջարկել է նախահաշվային գնից ընդամենը 7000 ՀՀ դրամ էժան գին ու ճանաչվել հաղթող: Ընկերությունը կասկած չունի, որ նշված մասնակցի կողմից առաջարկվելու է Philips ընկերության Digitrak XT մոդելի հոլտեր սարքը, քանի որ որևէ այլ արտադրողի բժշկական սարք չի համապատասխանում հրավերով:

Ընկերությունը բողոքով խնդրել է արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանն ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել ընթացակարագը, իսկ վերահայտարարելու դեպքում վերացնել բողոքում նշված խախտումները:

«Վերիտաս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.10.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.10.2019թ. թիվ ՊՆ/Ն/02/2223-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի վերաբերյալ պարզաբանման հարցումը ուղարկվել է 11.10.2019թ. (ուրբաթ) երեկոյան ժամը 17:44-ին և գնահատող հանձնաժողովն այդ հարցմանը ծանոթացել է հաջորդ երկուշաբթի օրը՝ 14.10.2019թ. և որի հաջորդ օրը՝ 15.10.2019թ.-ին տրվել է պարզաբանման պատասխան: Սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն՝ պարզաբանումը պետք է տրամադրվի հարցումն ստանալու օրվան հաջորդող 2 օրացուցային օրվա ընթացքում, ինչը տվյալ

դեպքում հնարավոր չէր՝ նկատի ունենալով, որ այդ 2 օրացուցային օրերը ոչ աշխատանքային էին:

Պարզաբանման պատասխանում նշված է եղել, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը (հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներ): Նշված չափաբաժնով մասնակիցների կողմից կարող են առաջարկվել ոչ միայն պարզաբանման հարցում ներկայացրած ընկերության կողմից նշած Philips ընկերության Digitrak XT մոդելի ապրանքատեսակը, այլ նաև այլ արտադրողի (ների) համարժեք ապրանքատեսակներ, հետևաբար նշված ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը չի հակասում ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի պահանջներին:

Միաժամանակ, ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի բովանդակությունը, Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքի պահանջը հիմնավորված չէ, քանի որ Ընկերությունը պահանջում է «Արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանը ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ընթացակարգը...»՝ այսինքն բոլոր չափաբաժինները, անտեսելով այն փաստը որ համաձայն կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ընթացակարգի 2-րդ չափաբաժինը արդեն իսկ հանդիսանում է «չկայացած» մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով (հիմք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Հաշվի առնելով նոր մրցույթային ընթացակարգ հայտարարելու, այն անցկացնելու, պայմանագիր կնքելու և ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը, և համեմատելով մինչև 2019թ. բյուջետային տարվա ավարտը

մնացած ժամանակահատվածի հետ՝ ակնհայտ է դառնում նոր ընթացակարգի իրականացման անհնարինությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը, Պատվիրատուն խնդրում է հանել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» գնման ընթացակարգի կասեցումը, քանի որ ընթացակարգի կասեցումը ռիսկային է դարձնում «Վերիտաս» ՍՊԸ-ի բողոքի էության հետ կապ չունեցող մնացած չափաբաժինների կայացումը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հարցմանն ի պատասխան տրված հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակված է www.procurement.am կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.10.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 17.10.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.10.2019թ. թիվ ՊՆ/Ն/02/2223-2019 գրությունը,

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով հաստատվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հոլտեր մոնիտոր գրանցող սարք /ծրագրային ապահովմամբ/	Գրանցող սարքը պետք է ապահովի առնվազն՝ - ԷՍԳ-ի անընդհատ, առնաց տվյալների կոմպրեսիայի գրանցում առնվազն 3 կանալներով - ԷՍԳ-ի ստանդարտ 12 արտածումների EASI մեթոդներով վերականգնում, օգտագործելով կատարված գրանցումները - Ոչ ավելի քան 5 էլեկտրոդների օգտագործում ԷՍԳ-ի արտածումները 3 կանալներով գրանցելու համար - Էլեկտրակարդիոխթանիչի աշխատանքի վերլուծություն, արտեֆակտերի ավտոմատ հեռացում և ռիթմի վարողի իմպուլսների նշանավորում - 24 ժամերի ընթացքում անընդհատ գրանցումներ ներդրված «ֆլեշ» քարտի վրա - Տվյալների անընդհատ գրանցումը առնվազն 72 ժամերի ընթացքում - Տվայլների գրանցման հնարավորություն 24-168 ժամերի ընթացքում - «Երևութներ» գրանցելը սեղմակոճակի միջոցով - ԷՍԳ-ի կորերի որակի ստուգում և գրանցումների տևողության որոշում ներկառուցված ՀԲ դիսփլեի միջոցով - ՀԲ էկրանի վրա էլեկտրոդների սխեմանրի ցուցադրում, EASI մեթոդների համաձայն, արտեֆակտների նվազեցման նպատակով էլեկտրոդների տեղակայում - Գրանցումների սկզբի և ավարտի սինքրոնացում գրանցող սարքի ժամացույցով - ԷՍԳ-ի ամպլիտուդների ընտրություն 0.5, 1 и 2 սմ/մՎ. գրանցումներ կատարելուց առաջ Սարքը պետք է ունենա հեղուկների համար ոչ թափանցիկ պատյան և, անգամ ջրի մեջ սուզվելու պարագյում, չկորցնի աշխատունակությունը: Գրանցող սարքի քաշը մարտկոցը և «ֆլեշ» քարտը հետ միասին չպետք է գերազանցի 70գ. Գրանցող սարքի արտաքին չափերը ոչ ավելի քան /Լ/95x/Խ/60x/Բ/20մմ. Ծրագրային ապահովման վերաբերյալ պահանջները՝ - Սքանավորման ռեժիմները առնվազն՝ ռետրոսպեկտիվ, պրոսպեկտիվ և սուպերիմպոզիտային - Ոչ ավելի քան 5 րոպեների ընթացքում բնականոն սքանավորում - Ռետրոսպեկտիվ և ինտերակտիվ պրոսպեկտիվ սքանավորումների համատեղմամբ ապարագ սքանավորման հնարավորություն - Թարթող արիթմիաներով խնամյալների բարթ ԷՍԳ-ի սքանավորման պարզեցման և բարդության գնահատման հատուկ ծրագեր - Ռիթմի խանգարումների վերլուծությունը ԷՍԳ-ի առնվազն 3 կանալներով - ST սեգմենտի վերլուծություն 12 արտածումներում 3 կանալներով - QT ինտերվալի վերլուծություն 3 կանալներով այդ թվում չկորեկտված QT ինտերվալը - ՍԿՀ-ի /ЧСС/ վարիաբելության վերլուծություն ժամանակյին և հաճախությունների դոմեններում - ԷՍԳ-ի 12 արտածումների դիտարկում սովորական ֆորմատում հետազոտման ցանկացած րոպեում - Ճշկրիտ հաշվետվությունների ստեղծում և EMR, HIS կամ TraceMasterVue համակրգերում պահպանում - Հաշվետվությունների ողակի խմբագրում և նրանցում կորերի ավտոմատ ներառում - Հաշվետվությունների էքսպորտ HL7 ֆորմատով կամ ծացքագրված vPDF Ստանդարտ USB ինտերֆեյս տվայլների փոխանցման համար Տվյալների բեռնումը պետք է կատարվի ոչ ավլի քան 90 վարկյանների ընթացքում: Մշտական հիշողության առկայություն Համալրումը՝ Գրանցող սարք, ծրագրային ապահովում, էլեկտրոդների մալուխ, էլեկտրոդներ /առնվազն 300 հատ միանվագ օգտագործվող/, ֆլեշ քարտ -5 հատ, պայուսակ գրանցող սարքի համար: *Գինը պետք է ներառի՝ մատակարում և երաշխիք ապրանքն ընդունվելու հաջորդող օրվանից հաշված առնվազն 730 օրացուցային օր շահագործման ձեռնարկում*

	նշված պայմաններ չխախտելու պարագայում:

Այսպիսով՝ Ընկերությունը բողոքով պնդել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմված է այնպես, որ բավարարում է միայն Philips ընկերության համապատասխան մոդելի ապրանքատեսակը:

Այս տեսանկյունից, ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը 2-րդ չափաբաժնի մասով՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց

դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը 2-րդ չափաբաժնի մասով՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Արձանագրում եմ նաև, որ տեխնիկական բնութագրով նախատեսվել են գնման առարկային ներկայացվող պահանջների (հատկանիշների) միջակայքեր, նվազագույն և առավելագույն շեմեր, ուստի գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավորված չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանում տրամադրելու վերաբերյալ բողոքով ներկայացված դիրքորոշմանը, ապա հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ

մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուի կողմից տրամադրված գրավոր ապացույցի համաձայն՝ Ընկերության կողմից հարցումը ներկայացվել է 11.10.2019թ. (ուրբաթ) ժամը 17:44-ին:

Ընկերությանը տրամադրված պարզաբանումը www.gnumner.am կայքում հրապարակվել է 15.10.2019թ. ժամը 12:32-ին:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 18.10.2019թ. ժամը 11:30-ն:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը պարզաբանումը տրամադրվել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետից հետո, սակայն արձանագրում եմ, որ նշված պարզաբանումը այնուամենայնիվ տրամադրվել է 15.10.2019թ.՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը (18.10.2019թ.), ուստի Ընկերությունը զրկված չի եղել թե պարզաբանման բովանդակությանը ծանոթանալու և թե Ընթացակարգը բողոքարկելու հնարավորությունից:

Գտնում եմ, որ բողոքը սույն մասով ևս անհիմն է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանում տրամադրելու Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետը չպահպանելը սույն գործի պայմաններում չի կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 17.10.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**